

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒԹ Յ ՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի «Հրազդանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունը ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջների համաձայն հայտարարում է բաց մրցույթ հետևյալ թափուր պաշտոնները համալրելու համար.

1. Նյարդաբան /մանկական/ - 1.0 դրույք
2. Ֆիզիոթերապևտիկ կաբինետի բժիշկ - 1.0 դրույք
3. Սրտաբան - 1.0 դրույք
4. Ընտանեկան բժիշկ - 4.0 դրույք
5. Հոգեբույժ-թմրաբան - 1.0 դրույք
6. Թերապևտ - 1.0 դրույք
7. Անեսթեզիոլոգ - ռեանիմատոլոգ - 1.0 դրույք
8. Ուռուցքաբան - 1.0 դրույք
9. Քիթ-կոկորդ-ականջաբան /մանկական/ - 1.0 դրույք
10. Իմունոլոգ – 1.0 դրույք
11. Բժիշկ - լաբորանտ – 1.0 դրույք
12. Վարակաբան – 1.0 դրույք
13. Էլեկտրասրտագրության բժիշկ – 1.0 դրույք

ՀՀ Կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի թիվ 22 արձանագրային որոշման պահանջներով բաց մրցույթի մասնակիցը կարող է լինել ցանկացած անձ, ով կրավարարի ստորև նշված պայմաններին՝

1. Բարձրագույն և հետբուհական կրթության առկայություն համապատասխան մասնագիտությամբ,
2. Հինգ տարուց ավելի աշխատանքային ստաժի առկայության դեպքում վերջին հինգ տարվա ընթացքում համապատասխան մասնագիտական կատարելագործման առկայություն,
3. Բժշկական էթիկայի կանոնների իմացություն:

Մրցույթին կարող է մասնակցել գրական հայերենին տիրապետող Հայաստանի Հանրապետության քաղաքացի, ինչպես նաև այն օտարերկրյա քաղաքացիները, ովքեր Հայաստանի Հանրապետությունում ունեն կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ, աշխատանքի թույլտվություն և ում կրթական փաստաթղթերը սահմանված կարգով ճանաչվել են Հայաստանի Հանրապետության կողմից:

ԹԱՓՈՒՐ ՏԵՂԻ ՀԱՎԱԿՆՈՐԴՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՒՄ Է

- 1) դիմում/լրացվում է տեղում/
- 2) մեկ լուսանկար 3x4 չափի,
- 3) քաղվածք աշխատանքային գրքույկից (աշխատանքային ստաժ ունենալու դեպքում),
- 4) ինքնակենսագրություն,
- 5) անձնագրի, բարձրագույն և հետբուհական (ում բժշկական բարձրագույն ուսումնական հաստատությունն ավարտելու ժամանակահատվածում օրենսդրությամբ սահմանվել է հետբուհական կրթության պահանջ (ինտերնատուրա, կլինիկական օրդինատուրա)) մասնագիտական կրթության որակավորման աստիճանը հավաստող ավարտական փաստաթղթի (դիպլոմի), վերապատրաստման վկայականի (դրա առկայության դեպքում) պատճենները և բնօրինակները,
- 6) արական սեռի անձինք՝ նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը,
- 7) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթուղթ՝ դիմումատուի ցանկությամբ,
- 8) օտարերկրյա քաղաքացիները՝ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ և աշխատանքի թույլտվություն:

Անհրաժեշտ փաստաթղթերը հանձնելուց հետո մրցույթի մասնակիցը կձանդթանա այն իրավական ակտերի ցանկին, որոնցից բաղկացած է լինելու հարցատոմսը:

Մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր՝ «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբի կողմից / հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ ք. Հրազդան Մ. Բաղրամյան թաղամաս, Պուրակային 32 /, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10.00-15.00-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2020 թվականի ապրիլի 10-ը:

Մրցույթը տեղի կունենա 2020 թվականի ապրիլի 15-ին «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում, ժամը 12:00-ին:

Մրցույթներին մասնակցել ցանկացող քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող են դիմել «Հրազդանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի աշխատանքային խմբին /հեռ.՝ (0223) 2-34-64, (0223) 6-15-00/: Միաժամանակ տեղեկացվում է, որ մրցույթին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացված փաստաթղթերը հետ չեն վերադարձվում: